



PROFESSIONAL FELLOWS

Օրենսդրական ոլորտի, կառավարման և քաղաքականության մշակման երիտասարդ մասնագետների (**Professional Fellows Program/PFP**) **ծրագիրը** հովանավորում է ԱՄՆ-ի Պետքարտուղարության կրթական և մշակութային գործերի բաժինը: Հայաստանում PFP ծրագիրն իրականացնում է Միջազգային կրթության ամերիկյան խորհուրդներ (Ամերիկյան խորհուրդներ) կազմակերպությունը:

PFP-ն հնարավորություն է ընձեռում երիտասարդ մասնագետներին ծանոթանալու և գործնական փորձ ձեռք բերելու ԱՄՆ-ի կառավարական մարմիններում: PFP-ն ներգրավում է մասնագետների, ովքեր աշխատելով պետական մարմիններում, քաղաքացիական, կրթության հաստատություններում, քաղաքացիների շահերի պաշտպանության կազմակերպություններում՝ ակտիվ ընդգրկված են օրենսդրական և/կամ քաղաքականության մշակման գործընթացում: PFP մասնակիցները ԱՄՆ-ի քաղաքական գործընթացների վերաբերյալ իրենց մասնագիտական հետաքրքրություններն ու գիտելիքները կկարողանան խորացնել՝ հնարավորություն ունենալով աշխատելու Միացյալ Նահանգների պետական օրենսդրական մարմիններում, քաղաքապետարաններում, ինչպես նաև ԱՄՆ-ի Կոնգրեսում և քաղաքականության մշակման հարցերով զբաղվող ՀԿ-ներում:

PFP-ի նպատակն է մասնակիցներին հնարավորություն տալ՝

- ավելի խորը ծանոթանալու ԱՄՆ-ի օրենսդրական գործընթացներին,
- կարևորելու քաղաքացիական հասարակության դերը և ներգրավվածությունը քաղաքական գործընթացներին,
- ստեղծելու գործընկերական կապեր ԱՄՆ-ի և Հայաստանի հաստատությունների միջև,
- միասնական ուղիներ փնտրելու և գործնական լուծումներ մշակելու ընդհանուր մտահոգություններն ու խնդիրները հաղթահարելու համար:

Հեռ.՝ 56 00 45, 54 40 12 էլ.Փոստ՝ pfp@americancouncils.am

կայք՝ www.americancouncils.am



PROFESSIONAL FELLOWS

PFP ծրագրի յուրաքանչյուր մասնակից վեցշաբաթյա վերապատրաստում կանցնի ԱՄՆ-ում: Ծրագրի նախնական ժամանակացույցի համաձայն 2018թ. գարնան ծրագրի մասնակիցներն ԱՄՆ-ում կլինեն ապրիլի 23-ից մինչև հունիսի 1-ը: PFP ծրագիրը տրամադրում է ճանապարհաձախս, վիզայի վճար, առողջության ապահովագրում և կրթաթոշակ: Բնակարանը և սնունդը տրամադրում են նախապես ընտրված հյուրընկալող ընտանիքները:

Ծրագրին մասնակցելու համար դիմորդները պետք է՝

- լինեն Հայաստանի Հանրապետության քաղաքացի և բնակիչ
- դիմելու պահին լինեն 25-ից 35 տարեկան
- ունենան առնվազն բակալավրի կրթություն
- ունենան առնվազն երկու տարվա համապատասխան աշխատանքային փորձ և մտադրություն աշխատանքը շարունակելու իրենց երկրի պետական և հանրային սեկտորում
- ցուցաբերեն առաջնորդելու և համագործակցելու հմտություններ
- տիրապետեն անգլերենին

PFP ծրագրի մասնակիցներն ընտրվում են մրցութային կարգով:

Ծրագրին մասնակցելու համար դիմորդները պետք է մինչև 2017թ. նոյեմբերի 13-ը ներկայացնեն օնլայն դիմում՝ <https://ais.americancouncils.org/pfp>

Ծրագրին դիմելու գործընթացի և մրցութի անցկացման մասին մանրամասն տեղեկություններ կարելի է ստանալ ծրագրի կայքից՝ <http://professionalfellows.americancouncils.org/> կամ կարելի է դիմել Ամերիկյան խորհուրդների հայաստանյան գրասենյակ: